

ISSN 0366-5119

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
БИОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ АРМЕНИИ
BIOLOGICAL JOURNAL OF ARMENIA

2011

Լույս է տեսնում 1948 թվականից, հոդվածները հրատարակվում են հայերեն,
ռուսերեն կամ անգլերեն լեզուներով

Выходит с 1948 года, статьи публикуются на армянском, русском
или английском языках

Journal is published since 1948, the articles are published in Armenian,
Russian or English

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ

Է.Ս. Գևորգյան (*գլխավոր խմբագիր*), Ռ.Մ. Հարությունյան (*գլխավոր խմբագրի տեղակալ*), Ա.Ս. Բոյաճյան (*գլխավոր խմբագրի տեղակալ*),
Ա.Հ. Եսայան (*պատասխանատու քարտուղար*), Գ.Ա. Գևորգյան, Ա.Հ. Թոշունյան,
Ռ.Հ. Հովհաննիսյան, Լ.Ռ. Մանվելյան, Ս.Խ. Մայրապետյան, Ժ.Հ. Վարդանյան.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Յու.Թ. Ալեքսանյան, Մ.Մ. Ավագյան, Է.Գ. Աֆրիկյան, Է.Ց. Գաբրիելյան,
Ա.Ա. Գալոյան, Ս.Ա. Դավթյան, Ժ.Ի. Հակոբյան, Վ.Պ. Հակոբյան, Կ.Գ. Ղարապետյան,
Ս.Հ. Մովսիսյան, Կ.Ս. Պողոսյան, Գ.Հ. Փանոսյան, Լ.Լ. Օսիպյան.

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Յ.Ս. Գևորգյան (*главный редактор*), Ր.Մ. Արությունյան (*заместитель главного редактора*), Ա.Ս. Բояджян (*заместитель главного редактора*),
Ա.Գ. Եсаян (*ответственный секретарь*), Զ.Ա. Варданян, Գ.Ա. Геворкян,
Տ.Խ. Майрапетян, Л.Р. Манвелян, Р.О. Оганесян, А.А. Трчунян

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Ս.Մ. Ավակյան, Վ.Ս. Ակոպյան, Զ.Ի. Ակոպյան, Յ.Տ. Ալեքսանյան, Յ.Գ. Աֆրիկյան,
Յ.Ս. Գաբրիելյան, Ա.Ա. Գալոյան, Մ.Ա. Դավթյան, Կ.Գ. Կարաջյան, Տ.Օ. Մովսեսյան,
Լ.Լ. Օսիպյան, Գ.Ա. Փանոսյան, Կ.Ս. Սոգոսյան.

THE EDITORIAL BOARD

Editor in chief: E.S. Gevorgyan, *Vice-editors:* R.M. Aroutiunian, A.S. Boyadjyan,
Secretary-in-charge: A.H. Yesayan, *Members of the Board:* G.A. Gevorgyan,
R.H. Hovanesyan, L.R. Manvelyan, S.Kh. Mayrapetyan, A.H. Trchunyan,
Zh.H. Vardanyan.

THE EDITORIAL COUNCIL

E.G. Afrikyan, Yu.T. Aleksanyan, Ts.M. Avakyan, M.A. Davtyan, E.Ts. Gabrielyan,
A.A. Galoyan, V.P. Hakobyan, Zh.I. Hakobyan, K.G. Karagiozyan, S.H. Movsesyan,
L.L. Osipyan, G.H. Panosyan, K.S. Poghosyan.

Հայաստանի Կենսաբանական Հանդես, 2011

© Биологический Журнал Армении, 2011

Biological Journal of Armenia, 2011

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Փորձարարական և տեսական հոդվածներ

Հարությունյան Թ. Գ. Ժայռային մողեսների (<i>Darevskia raddei</i> և <i>Darevskia portchinskii</i>) մակաբույծներով վարակվածությունը՝ կախված սեռից և տեսակից.....	6
Սարգսյան Մ. Վ. <i>Crataegus</i> ցեղի ներկայացուցիչների դերը Հայաստանի դենդրոֆլորայի ձևավորման գործում.....	12
Հովհաննիսյան Գ. Գ. Միտոմիցին C-ով ինդուցված միկրոկորիզների քրոմոսոմային կազմի FISH-վերլուծություն.....	19
Քարտաշյան Ն. Գ. Իջևանի ֆլորիստական շրջանի արեվելյան մասի ֆլորայի աշխարհագրական վերլուծությունը.....	25
Ալեքսանյան Ա. Ս. Հարավային Հայաստանի արիդային նոսրանտառների ֆլորայի կենսաձևային կառուցվածքը.....	31
Դալլաթյան Մ. Ռ., Ղուկասյան Է. Խ., Հակոբյան Ս. Հ. Հրազդան գետի հատակային ֆաունայի հիմնական խմբերը եվ դրանց էկոլոգիան	37
Թերզյան Դ. Օ. Գորտի անդաստակա-ուղեղիկային պրոեկցիոն համակարգի նեյրոնային մեխանիզմները.....	43
Ղուլիջանյան Հ. Ա. Սերմնային վերականգման առանձնահատկությունները զանգվածաբար հատված Արևելյան հաճարենու ծառուտներում.....	48
Քարսեղյան Ն. Ա., Կարապետյան Ա. Ս. Բաց հիդրոպոնիկայի և հողային մշակույթի պայմաններում աճեցրած փշոտ եղժնու մորֆոլոգա-անատոմիական համեմատական բնույթի հետազոտություններ.....	52
Քալալի Ս. Դ. Գորգանրուղ (Իրան) գետի վերջնական հատվածի ջրի որակական չափանիշները 2009-2010թթ. ժամանակահատվածում.....	57
Նահապետյան Խ. Հ., Հարությունյան Ռ. Ա. Դեքսամետազոնի ազդեցությունն առնետների ջերմակարգավորման մեխանիզմների վրա.....	64
Սարգսյան Է. Յ. <i>Candida</i> ցեղի տեսակների տարածվածությունը վուլվովագինալ կանդիդոզի ժամանակ.....	68
Սարգսյան Ն. Հ., Վարդանյան Լ. Գ. Հայաստանի որոշ սողունների հելմինթոֆաունան.....	75
Ռաշիդովա Գ. Խ. Իրանաբնակ ազերիների և պարսիկների գլխի չափագրական հատկանիշների բազմաչափ համեմատություն.....	78
Ռուխբյան Ս. Յա. Բույսերի ռեպլենտային ազդեցությունը <i>Varroa jacobsoni</i> տզերի վրա.....	81
Հարությունովա Լ. Դ. Քարանձավային փափկամարմինների տեսակ, <i>Pisidium subterraneum</i> Shadin, 1932 (Mollusca; Bivalvia; Pisidiidae) Ույց տեղավայրի պլեյստոցենյան նստվածքներից.....	84
Քարսեղյան Ն. Է., Վարդանյան Ս. Վ. Սօանա լճի համար նոր տեսակ հանդիսացող հայկական տառեխիկի <i>Alburnoides bipunctatus armeniensis</i> (Osteichthyes, Cyprinidae) կենսաբանական բնութագիրը.....	87
Քաղղասարյան Ե. Գ., Շալունց Շ. Վ. Բիբրոմատի թունազրկումը հողային միկրոօրգանիզմներով.....	90
Հովհաննիսյան Վ. Ս. Կենսաբանական պայքար քոռուկների դեմ.....	93
Սկրտչյան Լ. Պ. Հետադիմական երևույթների նշանակությունը կոկցիդների (<i>Homoptera, Coccidea</i>) որոշ խմբերի էվոլյուցիայում.....	96
Օգտակար միջոցառում.....	99

СОДЕРЖАНИЕ

•Экспериментальные и теоретические статьи•

<i>Арутюнян Т.К.</i> Зараженность паразитами скальных ящериц (<i>Darevskia raddei</i> и <i>Darevskia portchinskii</i>) в зависимости от пола и вида.....	6
<i>Саркисян М.В.</i> Роль представителей рода <i>Crataegus</i> в образовании дендрофлоры Армении.	12
<i>Оганесян Г.Г.</i> FISH-анализ хромосомного состава индуцированных митомицином С микроядер.....	19
<i>Картамян Н.Г.</i> Географический анализ флоры восточной части Иджеванского флористического района.....	25
<i>Алексян А.С.</i> Биоморфологическая структура флоры аридных редколесий Южной Армении.....	31
<i>Даллакян М.Р., Гукасян Э.Х., Акопян С.А.</i> Основные группы донной фауны реки Раздан и их экология	37
<i>Терзян Д.О.</i> Нейронные механизмы вестибуло-мозжечковой проекционной системы лягушки.....	43
<i>Кулиджанян Г.А.</i> Особенности семенного возобновления на массово вырубленных древостоях бука восточного.....	48
<i>Барсегян Н.А., Карапетян А.М.</i> Морфолого-анатомическое сравнительное исследование ели колючей, выращенной в условиях открытой гидропоники и почвы.....	52
<i>Балали С. Д.</i> Параметры качества воды в устье (конечной части) реки Горганруд (Иран) в период с 2009 по 2010гг.....	57
<i>Нагапетян Х.О., Арутюнян Р.А.</i> Влияние дексаметазона на терморегулирующие механизмы у крыс.....	64
<i>Саркисян Э.В.</i> Распространенность видов рода <i>Candida</i> при вульвовагинальном кандидозе.	68
<i>Саргсян Н, Вартамян Л.</i> Гельминтофауна некоторых пресмыкающихся Армении.....	75
<i>Рашидвaш Вагид.М.</i> Многомерное сравнение кефалометрических признаков у иранских азербайджанцев и персов.....	78
<i>Рухкян М.Я.</i> Действие репеллентов растений на клещей <i>Varroa Jacobsoni</i>	81
<i>Арутюнова Л.Д.</i> Пещерный вид моллюска <i>Pisidium subterraneum</i> Shadin, 1932 (Mollusca; Bivalvia; Pisidiidae) из плейстоценовых отложений местонахождения Уйц (Армения)	84
<i>Барсегян Н.Э., Варданян Т.В.</i> Биологическая характеристика нового вида для озера Севан – армянской быстрянки (<i>Alburnoides bipunctatus armeniensis</i> (Osteichthyes, Cyprinidae))	87
<i>Багдасарян Е.Г., Шалуц Ш.В.</i> Нейтрализация бихромата почвенными микроорганизмами.....	90
<i>Оганесян В.С.</i> Биологическая борьба со слепнями.....	93
<i>Мкртчян Л.П.</i> О роли регрессивных явлений в эволюции некоторых групп кокцид (<i>Homoptera, Coccidea</i>).....	96
Полезное мероприятие.....	99

CONTENTS

•Experimental and theoretical articles•

<i>Harutyunyan T.K.</i> Infection of parasites of rock lizards (<i>Darevskia raddei</i> and <i>Darevskia portchinskii</i>) depending on sex and species.....	6
<i>Sargsyan M. V.</i> The role of representatives of <i>Crataegus</i> genus in formation process of dendroflora of Armenia.	12
<i>Hovhannisyanyan G.G.</i> FISH analysis of chromosomal contents of mitomycin C-induced micronuclei	19
<i>Kartashyan N.G.</i> The geographical analysis of flora of the east region of Ijevan floristic district.....	25
<i>Alexanyan A.S.</i> Biomorphological structure of the flora of arid light woodlands of South Armenia.....	31
<i>Dallakyan M.R., Ghukasyan E.Kh., Hakopyan S.A.</i> The main groups of bottom community of the river Hrazdan and their ecology.....	37
<i>Terzyan D.O.</i> Neuronal mechanisms of frog vestibule-cerebellar projection system.....	43
<i>Ghulijanyan H.A.</i> Peculiarities of seed regeneration of mass logged eastern beech stands....	48
<i>Barseghyan N.A., Karapetyan A.M.</i> Comparative morphological-anatomical studies of Colorado Blue spruce carried out in both hydroponic and soil conditions.....	52
<i>Balaly S.D.</i> Water quality parameters in terminal part of Gorganroud river during 2009-2010.....	57
<i>Nahapetyan Kh.H., Harutyunyan R.A.</i> The influence of dexamethasone on thermoregulating mechanisms in rats.....	64
<i>Sargsyan E.V.</i> Distribution of species of <i>Candida</i> genus in the case of vulvovaginal candidiasis.....	68
<i>Sargsyan N., Vartanyan L.</i> Helminthofauna of some reptiles of Armenia.....	75
<i>Rashidvash Vahid.M.</i> Multivariate comparison of cephalometric traits in Iranian azeris and persians.....	78
<i>Rukhkyan M.Ya.</i> The influence of repellent plants of <i>Varroa Jacobsoni</i> ticks.....	81
<i>Harutyunova L.D.</i> Spelean species of mollusca <i>Pisidium subterraneum</i> Shadin, 1932 (Mollusca; Bivalvia; Pisidiidae) from pleistocene locality Uyts (Armenia)	84
<i>Barseghyan N.E., Vardanyan T.V.</i> Biological characteristics of a new species for lake Sevan: Armenian sprinlin (<i>Alburnoides bipunctatus armeniensis</i> (Osteichthyes, Cyprinidae))	87
<i>Baghdasaryan E.G., Shalunts S.H.V.</i> Detoxication of bichromate with soil microorganisms.....	90
<i>Hovhannisyanyan V.S.</i> Biological struggle against horseflies.....	93
<i>Mcrtchyan L.P.</i> The role of regressive phenomena in evolution of some groups of Coccinea (<i>Homoprepera</i> , <i>Coccidea</i>).....	96
Useful measure.....	99



Հայաստանի կենսաբ. հանդես, 2(63), 2011

ԺԱՅՌԱՅԻՆ ՄՈՂԵՍՆԵՐԻ (*DAREVSKIA RADDEI* ԵՎ *DAREVSKIA PORTCHINSKII*) ՄԱԿԱԲՈՒՅԾՆԵՐՈՎ ՎԱՐԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿԱԽՎԱԾ ՍԵՌՈՒՑ ԵՎ ՏԵՍԱԿԻՑ

Թ. Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԵՊՀ, Կենսաբանության ֆակուլտետ, կենդանաբանության ամբիոն
Email: temharutunyan@gmail.com

Ուսումնասիրվել է արյան մակաբույծներով վարակվածությունը *Darevskia raddei* և *D. portchinskii* ժայռային մողեսների սիմպատրիկ պոպուլյացիաներում՝ 121 սեռահասուն առանձնյակների վրա: Արյան մակաբույծներով վարակվածությունը կարող է կախված լինել տեր-օրգանիզմի սեռից: Մի տեսակի մոտ շատ ավելի վարակված են արուները, մյուսի մոտ՝ էգերը: *D. raddei*-ի վարակվածության աստիճանն ավելի բարձր է, քան *D. portchinskii* մոտ:

Մակաբույծ-տեր փոխհարաբերություններ (ժայռային մողեսներ (արյան մակաբույծներ (սիմպատրիկ պոպուլյացիա

Исследовалась на зараженность кровепаразитами 121 половозрелой особи в симпатрических популяциях скальных ящериц *D. raddei* и *D. portchinskii*. Зараженность кровепаразитами может зависеть от пола хозяина. У одного вида больше заражены самцы, у других – самки. У *D. raddei* уровень зараженности выше, чем у *D. portchinskii*.

Паразит-хозяин взаимоотношения – скальные ящерицы – кровепаразиты – симпатрическая популяция

The infections by blood parasites in sympatric populations of rock lizards *D. raddei* and *D. portchinskii* were studied. 121 adult individuals have been observed. Infection by blood parasites depends on sex of host. *D. raddei* species is more infected than *D. portchinskii*.

Host-parasite relationships – rock lizards – blood parasites – sympatric population

Մակաբույծ-տեր փոխհարաբերությունների ուսումնասիրությունները հանդիսանում են կենսաբանության, էկոլոգիայի և էվոլյուցիոն տեսության կարևորագույն հարցերից մեկը [14, 15]: Վայրի կենդանիների պոպուլյացիայում մակաբույծ-տեր փոխհարաբերությունների ուսումնասիրությունը կարևորվում է նրանով, որ այն ցույց է տալիս էկոհամակարգերում առկա կապերը և էվոլյուցիայի զարգացման ուղիները: Գրականության մեջ այս հարցերը լուսաբանված չեն և փորձարարական տվյալների կարիք ունեն [15]:

Հեմոգրեգարիաները (տիպ Myxozoa, ենթատիպ Apicomplexa, դաս Sporozoa) հանդիպում են կենդանական բոլոր խմբերի, առավել հաճախ՝ սողունների մոտ, որոնք հանդիսանում են նրանց միջանկյալ տերեր: Նրանց օրգանիզմում տեղի է ունենում մերոգոնիան և գամետոգոնիայի սկզբնական փուլը՝ մինչև գամետոնների առաջացում, իսկ անողնաշարավոր տիրոջ մոտ ձևավորվում են գամետոները, և սկսվում է սպորոգոնիան [21]:

Առաջին անգամ հեմոգրեգարիաները մողեսների մոտ նկարագրվել են 1885-ին՝ Դանիլևսկու կողմից [8]: Սկզբնական աշխատանքները կատարվել են Կրասիլնիկովի [2],

հետագայում շարունակվել Բեյերի և համահեղինակներ կողմից [1, 5]: Բեյերը նկարագրել է *Karyolysus* ցեղի հինգ տարբեր ձևեր [1], որոնց տեսակային պատկանելիությունը բացահայտված չէ: Սակայն այլ աշխատանքներում նշվում է, որ մոդեսների մոտ հիմնականում մակաբուծում են *Hepatozoon* ցեղի մակաբույծները [13, 21]:

Հայտնի է, որ մակաբույծների վրա ազդող գործոններից են տիրոջ սեռը, տարիքը [19], վերաբրտադրողականության ինտենսիվությունը [14], տիրոջ վիճակը, ֆիզիոլոգիան [10], պոպուլյացիայի խտությունը [3] և ոչ կենսածին այնպիսի գործոններ, ինչպիսիք են ջերմաստիճանը, խոնավությունը [4] և այլն:

Darevskia ցեղի մոդեսների մակաբույծներին վերաբերող աշխատանքները չափազանց թերի են: Քիչ են նաև տվյալներն այն մասին, թե միևնույն տեսակի էգերի և արուների միջև ինչպես է արտահայտվում մակաբուծային վարակվածությունը: Վերջին հետազոտությունները ցույց են տվել, որ մակաբույծներն ընտրում են այն տերերին, որոնց օրգանիզմում վերաբրտադրման համար պայմաններն առավելապես բարենպաստ են [12]: Սակայն այդ մեխանիզմը դեռևս ամբողջությամբ պարզաբանված չէ: Պատահական չէ նաև մակաբույծների տարածումը՝ մի պոպուլյացիայի վարակվածության աստիճանն ավելի բարձր է, քան մյուսներինը [7]: Ըստ գրականության տվյալների՝ կենդանական տարբեր խմբերի մոտ արուներն ավելի հակված են մակաբույծներով վարակմանը, քան էգերը [22]: Ամենայն հավանականությամբ, դա պայմանավորված է արուների ավելի մեծ ակտիվությամբ [22] և նրանց անդրոգեն հորմոնի իմունոսուպրեսոր հատկությամբ [25]:

Հայաստանում բնակվող *Darevskia* ցեղի ժայռային մոդեսներին բնորոշ է արեալների վերածածկը [9]: Միևնույն տարածքում ապրող տեսակները ենթարկվում են միևնույն մակաբույծներով վարակմանը և արտաքին միջավայրի ազդեցությանը, ինչը բարենպաստ պայմաններ է ստեղծում մակաբույծ-տեր փոխհարաբերությունների ուսումնասիրության համար [11]:

Աշխատանքը վերաբերում է ժայռային մոդեսների արուների և էգերի մակաբույծներով վարակվածության աստիճանի, ինչպես նաև մակաբույծ-տեր փոխհարաբերությունների ուսումնասիրմանը:

Աշխատանքի նպատակն է պարզաբանել սիմպատրիկ *D. raddei* և *D. Portchinskii* երկսեռ ժայռային մոդեսների վարակվածությունը ըստ սեռի և տեսակի:

Նյութ և մեթոդ. Աշխատանքի համար օգտագործվել են Մ. Առաքելյանի կողմից 2004-2010 թթ. մայիս-հունիս ամիսներին հավաքված մոդեսները: Հավաքը կատարվել է Լեռնային Ղարաբաղի հանրապետության Շահումյանի շրջանի Զուար գյուղի շրջակայքից, որտեղ հանդիպում է *Darevskia* ցեղին պատկանող *D. raddei* և *D. portchinskii* երկսեռ ժայռային մոդեսների սիմպատրիկ պոպուլյացիա: Բռնել և ուսումնասիրվել են *D. raddei* 51 (30 արու, 21 էգ) և *D. portchinskii* 70 (48 արու, 22 էգ) սեռահասուն առանձնյակ:

Մեր կողմից կատարվել է նյութի հետագա մշակում և ուսումնասիրություն:

Կենդանիները համարակալվել են, նշվել է սեռը, չափվել է մարմնի ընդհանուր երկարությունը: Քսուքի համար անհրաժեշտ արյունը վերցվել է պոչից [20]: Արյունը կաթեցրել ենք առարկայակիր ապակու վրա և մեկ այլ ապակիով տարածել: Քսուքը նույնպես համարակալվել է, իսկ բռնված կենդանիներն աշխատանքի ավարտից հետո բաց են թողնվել նույն տարածքում:

Ստացված քսուքները չորացվել են, ֆիքսվել մեթանոլով, որից հետո ներկվել Գիմզա-Ռոմանովսկու մեթոդով: Ներկված քսուքները դիտել ենք մանրադիտակի տակ՝ x800 խոշորացմամբ: Յուրաքանչյուր քսուքում, պատահական ընտրված դաշտերում հաշվել ենք 2000 էրիթրոցիտ և դրանցում եղած վարակված էրիթրոցիտների քանակը:

Արյան բոլոր մակաբույծները, ըստ մի շարք ձևաբանական տարբերությունների, մեր կողմից բաշխվել են վեց ձևի, որի համար սկզբնաղբյուր են ծառայել մի շարք աշխատանքներ [1, 2, 5]:

Առաջին ձևի ցիտոպլազմայում առկա են պղպջականման վակուոլներ, ցիտոպլազման ներկվում է բաց վարդագույն կամ մանուշակագույն (որը պատկանում է *Hepatozoon sp.*-ին):

Երկրորդ ձևն ունի ծոված մարմին, գրեթե չներկված ցիտոպլազմա, երկարացած, երկու թելերի նմանվող կորիզը գտնվում է մարմնի լայնացած մասում (պատկանում է *Karyolysus sp.*-ին):

Երրորդ ձևի մարմինը ծայրերում սրացած է, ունի գրեթե անգույն ցիտոպլազմա և տեր բջջի կորիզը շրջապատում է այնպես, որ վերջինս երևում է օպտիկ ձևով (պատկանում է *Karyolysus sp.*-ին):

Չորրորդ ձևի մարմինը մի ծայրում լայնացած է, իսկ մյուսում առաջացնում է օպտիկ (պատկանում է *Karyolysus sp.*-ին):

Հինգերորդ ձևը ձվաձև է, բաց մանուշակագույն ներկված ցիտոպլազմայով, կորիզը գտնվում է մարմնի կենտրոնում: Ցիտոպլազմայում երևում են երկայնական ձգանքներ, որոնք ներկվում են բաց մանուշակագույն (պատկանում է *Hepatozoon sp.*-ին):

Վեցերորդ ձևը նույնպես ձվաձև է, ունի վատ ներկված ցիտոպլազմա, կորիզը գտնվում է մարմնի կենտրոնում կամ մասնակի ուղղված է մի կողմի վրա (պատկանում է *Hepatozoon sp.*-ին):

Քանակական տվյալները մշակվել են 2-way ANOVA վիճակագրական ծրագրով: Կատարվել է արյան մակաբույծներով վարակման էքստենսիվության և ինտենսիվության աստիճանի որոշում:


Մակաբույծներով վարակվածության տվյալները ներկայացվել են հետևյալ ձևով՝

Քանակ (n), թվաբանական միջին (թվաբանական միջինի սխալ և մինիմում (մաքսիմում:

Արդյունքներ և քննարկում: Չուարի *D. portchinskii* և *D. raddei* պոպուլյացիայում արյան մակաբույծները հանդիպում են հիմնականում ներերիթրոցիտային ձևով, սակայն կան նաև քիչ քանակությամբ (4%) արտաերիթրոցիտային (պլազմային) մակաբույծներ: Ընդ որում, այդ ձևերով կենդանիների վարակվածության բավականին բարձր աստիճան դիտվել է և՛ *D. raddei* (n=51; 30.1(0.15; 0-150), և՛ *D. Portchinskii* մոտ (n=70; 15.2(0.11; 0-170): Նշենք նաև, որ հայտնաբերվել են պղպջականման գոյացություններ, որոնց պատկանելիությունը դեռ պարզաբանված չէ (2.5%): Պարզ չէ նաև այդ գոյացությունների ու արյան մակաբույծների փոխհարաբերությունները:

Վարակվածության էքստենսիվությունը *D. raddei*-ի էգերի մոտ՝ 76% է (21 էգերից վարակված են եղել 16-ը), իսկ արուների մոտ՝ 90% (30-ից վարակված են եղել 27-ը), *D. portchinskii*-ի էգերի մոտ՝ 59% (22 էգերից վարակված էին 13-ին), իսկ արուների մոտ՝ 45% (48 արուներից վարակված են եղել 22-ը):

D. portchinskii -ի և *D. raddei*-ի մակաբուծային վարակվածության ինտենսիվության մեջ հայտնաբերել ենք հավաստի տարբերություն 2-way ANOVA-ի թեստով $F(2, 1194)=30.7, p<0.001$:




Նկ.1. Վարակվածության ինտենսիվությունը (վարակված էրիթրոցիտների տոկոսը 2000 բջջում): Տատանման սահմաններն ընկած են 0.95 հավաստի միջակայքում:

Նկ. 1-ում երևում է, որ *D. portchinski* էգերը հավաստի տարբերությամբ ավելի վարակված են $F(1, 701)=17.6, p<0.001$, քան արուները, իսկ *D. raddei* -ի մոտ, ընդհակառակը, արուներն անհամեմատ վարակված են էգերից $F(1, 498)=39.2, p<0.001$: Երկու տեսակի արուների միջև կա հավաստի տարբերություն $F(1, 770)=145.1, p=0.001$, իսկ էգերի միջև այդ տարբերությունը հավաստի չէ $F(1, 429)=1.1, p=0.29$:

D. portchinskii-ի և *D. raddei* վարակվածության մակաբույծների ձևերի համեմատությունը ցույց տվեց, որ գրականության մեջ նշված վեց մակաբուծային ձևերից երկու տեսակների մոտ առկա է միայն հինգը: *D. portchinskii* -ի մոտ բացակայում է առաջին, իսկ *D. raddei* (ի մոտ՝ մակաբույծի երկրորդ ձևը:

D. portchinskii -ի արուների մոտ՝ (N=21) առավել մեծ վարակվածություն դիտվում է ըստ մեր կողմից բաժանված վեցերորդ (որը *Hepatozoon* ցեղի ներկայացուցիչ է), իսկ նվազագույն՝ ըստ երկրորդ (*Karyolysus* ցեղի ներկայացուցիչ) ձևի:


D. portchinski -ի էգերի (N=21) վեց մակաբուծային ձևերով վարակվածության աստիճանի համեմատության ժամանակ պարզվեց, որ, ի տարբերություն արուների, էգերն առավելագույնս վարակված են երրորդ ձևով: Բարձր է նաև վեցերորդ ձևով վարակվածության աստիճանը: Մինիմալ վարակվածություն դիտվում է ըստ երկրորդ ձևի:



Նկ.2 *Darevskia portchinskii*-ի էգերի և արուների վարակվածության աստիճանի համեմատությունը:

D. raddei-ի մակաբուծային վարակվածության համեմատման ժամանակ արուների մոտ (N=30) դիտվում է առավելագույն վարակվածություն վեցերորդ ձևով: Շատ են հանդիպում նաև երրորդ ձևի մակաբույծներ: Նվազագույն վարակվածություն դիտվում է ըստ չորրորդ և հինգերորդ (*Karyolysus*) ձևերի: Առաջին և երկրորդ ձևով վարակվածություն չի գրանցվել:

D. raddei -ի էգերի մոտ (N=21) բարձր վարակվածություն դիտվում է ըստ վեցերորդ և առաջին ձևերի, նվազագույն վարակվածություն՝ ըստ երրորդ ձևի: Երկրորդ ձևը բացակայում է:



Նկ.3 *Darevskia raddei* -ի էգերի և արուների վարակվածության աստիճանի համեմատությունը:

Մի տարածքում ապրող երկու տարբեր պոպուլյացիաների ուսումնասիրությունը բերում է մի շարք հետաքրքիր արդյունքների:

Մինչ այսօր երկու սիմպատրիկ տեսակների արյան մակաբույծներով վարակվածության աստիճանը լիովին պարզաբանված չէ: Մեռից կախված վարակի ընկալունակության վերաբերյալ տվյալները սակավ են և հակասական: Գրականության մեջ այս հարցի վերաբերյալ կան մի շարք վարկածներ: Ըստ որոշ գիտնականների [6], վարակվածության բարձր աստիճանը և մակաբուծային կայունությունը կարող են պայմանավորված լինել նրանով, որ մակաբույծները հասանելի չեն տիրոջ իմունային համակարգի համար [23]: Թե՛ այլ հետազոտություններ ցույց են տալիս, որ տեր-օրգանիզմներն (մոդեստները) ունեն ակտիվ իմունային համակարգ [16] և կարող են կարգավորել արյան մակաբույծներով վարակվածությունը: Ավելին, մակաբույծ-տեր փոխհարաբերությունները բերում են կոէվոլյուցիայի և սիմպատրիկ տեսակառաջացման [24]: Ըստ որոշ գիտնականների [18], արյան մակաբույծներով վարակվածությունը կախված չէ սեզոնային, ջերմաստիճանային պայմաններից և տեղումների քանակից, այլ կախված է տիրոջ իմունային համակարգից: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ արուներն ավելի հակված են վարակմանը, քան էգերը՝ պայմանավորված արուների անդրոգեն հորմոնի իմունոսուպրեսոր հատկությամբ [17]:

Ըստ որոշ տվյալների, մոդեստների վարակվածության տարածվածությունն ավելի շատ է որոշ տարիքային խմբերում: Մեռահասուն ձևերի վարակվածությունն ավելի բարձր է, ինչը կարող է կապված լինել վարքագծի, սննդի և սեռահասուն դառնալու հետ [19]:

Այս աշխատանքում վերցվել են սիմպատրիկ պոպուլյացիաներ, որտեղ արտաքին միջավայրի ազդեցությունն այս երկու տեսակների համար նույնն է:

Սակայն այստեղ, տեսակից և սեռից վարակվածության ուսումնասիրության տվյալները հակասում են մինչ այդ գրականության մեջ եղած մի շարք տվյալների: Մի տեսակի մոտ ավելի շատ վարակված են արունները, մյուսների մոտ՝ էգերը: Հետևաբար, արունների ավելի բարձր վարակունակությունը դրվում է կասկածի տակ: Առաջ է գալիս վարակունակությունը պարզաբանող այլ գործոնների ուսումնասիրության անհրաժեշտություն:

Արդյունքները ցույց են տվել վարակունակության տեսակային ընտրողականություն *D.raddei*-ի առանձնյակներն ավելի վարակված էին, քան *D.portchinski*-ի մոտ: Բացի դրանից, պարզվեց, որ այս պոպուլյացիայի երկու տեսակի համար առավել վարակունակ է *Hepatozoon* ցեղի մակաբույծը (վեցերորդ ձև), այն դեպքում, երբ մյուս ձևերի բաշխվածությունն ունի տեսակային և սեռական ընտրողականություն:

Արդյունքում, *Hepatozoon* և *Karyolysus* ցեղերի մակաբույծների ազդեցությունը տիրոջ վրա կարող է կախված լինել մի շարք այնպիսի գործոններից, ինչպիսիք են տարիքը, սեռը, կենդանու վարքագիծը, իմունային համակարգի կամ գենոտիպի (հետերոզիգոտության) վիճակը, շրջապատող միջավայրի էկոլոգիական պայմանները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Бейер Т.В.; Селиванова Г.В. Цитофотометрическое исследование количества ДНК в ядрах гемогregarин из диплоидных и триплоидных скальных ящериц Армении; Цитология, XI, с.739-743, 1969.
2. Красильников Е.Н. Паразиты скальных ящериц Кавказа. Сб. научн. работ Волгоградск. пед. инст., 2, 84-90, 1967.
3. Arneberg P., Skorping A., Grenfell B.T., Read A.F. Hostdensities as determinants of abundance in parasite communities. Proc. R. Soc. Lond. B 265, 1283-1289, 1998.
4. Bennett G.F., Cameron M. Seasonal prevalence of avian he matozoa in passer form birds of Atlantic Canada. Can. J. Zool. 52, 1259-1264, 1974.
5. Beyer T.V., Sidorenko N.V. Karyolysus sp. (Haemogregarinidae, Adeleida, Apicomplexa): host-parasite relationships of persisting stages. J. Protozool. 31, 513-517, 1984.
6. Bromwich C.R., Schall J.J. Infection dynamics of Plasmodium mexicanum, a malarial parasite of lizards. Ecology 67, 1227-1235, 1986.
7. Combes C. Parasitism: The Ecology and Evolution of Intimate Interactions. Chicago, IL. University of Chicago Press, 2001.
8. Danilevskii V.I. De Hamatozoen der Kaltbluter. Arch. Mikr. Anat., 24, 588-598, 1885.
9. Darevsky I.S. Systematics and ecology of rock lizards (Lacerta saxicola Eversmann) in Armenia [in Russian]. Zool. sb. AN Armenia SSR ,10, 27-57, 1957.
10. Dowell S.F., Seasonal variation in host susceptibility and cycles of certain infectious diseases. Emerging Infect. Dis. [Serial Online], 7. Available from <http://www.cdc.gov/ncidod/eid/vol7no3/dowell.htm>, 2001.
11. Klein S.L. The effects of hormones on sex differences in infection: from genes to behavior. Neurosci. Biobehav. Rev. 24, 627-638, 2000.
12. Krasnov B.R., Khokhlova I.S., Shenbrot G.I. Density-dependent host selection in ectoparasites: an application of isodar theory to fleas parasitizing rodents. Oecologia 134, 365-373, 2003.
13. Miller W.W. Hepatozoon perniciosum (n.g., n.sp.); a haemogregarine pathogenic for white rats, with a description of the sexual cycle in the intermediate host, a mite (Laelaps echidninus). Hyg. Lab. Bull., 46, 1-51. 1908.
14. Nordling D., Andersson M., Zohari S., Gustafsson L., Reproductive effort reduces specific immune response and parasite resistance. Proc. R. Soc. Lond. B 265, 1291-1298, 1998.
15. Real L.A., Sustainability and the ecology of infectious disease. Bioscience, 46, 88-97, 1996.
16. Saad A.H., Khalek N.A., El Ridi R., Blood testosterone level: a season-dependent factor regulating immune reactivity in lizards. Immunobiology, 180, 184-194, 1990.
17. Schalk G., Forbes M.R. Male biases in parasitism of mammals: effects of study type, host age, and parasite taxon. Oikos , 78, 67-74, 1997.
18. Schall J.J. Prevalence and virulence of a haemogregarine parasite of the Aruban whiptail lizard, Cnemidophorus arubensis. J. Herpetol., 20, 318-324, 1986.
19. Schall J.J., Pearson A.R., Perkins S.L., Prevalence of malaria parasites (Plasmodium floridense and Plasmodium azurophilum) infecting a Puerto Rican lizard (Anolis gundlachi): a nine-year study. J. Parasitol. 86, 511-515, 2000.

20. Sevinç M., Ugurtas I.H., & Yildirimhan H.S. Erythrocyte measurements in Lacerta rudis (Reptilia, Lacertidae). Turkish Journal of Zoology, 24, 207–209, 2000.
21. Telford S.R. Hemoparasites of the reptilia. Color and text. Boca Raton: CRC Press, 376 pp. 2008.
22. Tinsley R.C. The effects of host sex on transmission success. Parasitol. Today 5, 190-195, 1989.
23. Uller T., Olsson M. Testosterone exposure increases ectoparasite susceptibility. Proc. R. Soc. Lond. B., 270, 1867–1870, 2003.
24. Wozniak E.J., Kanitz C., Homer B., Kreisle R., Telford S.R.J., McLaughlin G., Demonstration of common and stage-specific anti-Hepatozoon mocassini antibodies in experimentally infected unnatural lizard hosts. Int. J. Parasitol. 26, 131–133, 1996.
25. Zuk M. Disease, endocrine-immune interactions, and sexual selection. Ecology, 77, 1037-1042, 1996.

Ստացվել է 17.02.2011



Հայաստանի կենսաբ. հանդես, 2(63), 2011

CRATAEGUS ՑԵՂԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԴԵՐՈ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՆԴՐՈՖԼՈՐԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Մ.Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտ
samerine@mail.ru

Հայաստանում աճում է *Crataegus* L. (Rosaceae) ցեղի 22 տեսակ: *C. susanykleinae* Gabrielian et Sargsyan, *C. x ulotricha* Pojark. ex Gladkova, *C. x razdanica* Pojark. ex Sargsyan, *C. gabrieliana* Pojark. ex Sargsyan տեսակները հանդիսանում են Հայաստանի էնդեմներ: Հոդվածում բերվում են տվյալներ սզնիների աճման պայմանների և տարածման մասին:

Crataegus L. (Rosaceae) – Հայաստանի ֆլորա

В Армении произрастает 22 вида рода *Crataegus* L. (Rosaceae). Виды *C. susanykleinae* Gabrielian et Sargsyan, *C. x ulotricha* Pojark. ex Gladkova, *C. x razdanica* Pojark. ex Sargsyan, *C. gabrieliana* Pojark. ex Sargsyan являются эндемиками Армении. В статье приводятся сведения о произрастании и распространении видов боярышников.

Crataegus L. (Rosaceae) – флора Армении.

There are 22 species of the *Crataegus* L. (Rosaceae) in Armenia. *C. susanykleinae* Gabrielian et Sargsyan, *C. x ulotricha* Pojark. ex Gladkova, *C. x razdanica* Pojark. ex Sargsyan, *C. gabrieliana* Pojark. ex Sargsyan species are endemics of Armenia. The data on habitats and distribution of hawthorns in Armenia were adduced.

Crataegus L. (Rosaceae) – flora of Armenia

Հայաստանի դենդրոֆլորայի հարուստ տեսակային կազմը պայմանավորված է յուրահատուկ աշխարհագրական դիրքով և անտառաբուսական պայմանների մեծ բազմազանությամբ: Ռելիեֆի խիստ կտրտվածության և ուղղաձիգ գոտիականության շնորհիվ Հայաստանի անտառները բնութագրվում են հարուստ ու բազմազան տեսակային կազմով և անտառային համակեցություններով: Հայաստանի դենդրոֆլորայի կազմում առաջատար դեր է խաղում Վարդագգինների (Rosaceae) ընտանիքը: Այն ներկայացված է 18 ցեղի պատկանող 102 տեսակներով, ինչը կազմում է դենդրոֆլորայի տեսակների ընդհանուր քանակի 31.5% [1]: Ընտանիքը ներկայացնող *Pyrus*, *Sorbus*, *Crataegus*, *Cotoneaster*, *Rubus* և *Rosa* ցեղերը մեծ նշանակություն ունեն Հայաստանում՝ տարբեր բուսական համակեցությունների առաջացման մեջ:

Իր տեսակային կազմով և տաքսոնոմիական բազմազանությամբ, սզնին (*Crataegus*) հանդիսանում է Rosaceae ընտանիքի խոշոր ցեղերից մեկը: Այդ ցեղի ներկայացուցիչներն աճում են Հյուսիսային կիսագնդի բարեխառն գոտում: Տարբեր հեղինակների տվյալներով ցեղը ներառում է 150-1200 տեսակ: Հայաստանում, աճելով ցածր, միջին և բարձր լեռնային գոտիներում, սզնիները մեծ դեր ունեն դենդրոֆլորայի ձևավորման գործում՝ հանդիսանում են մի շարք անտառային համակեցությունների կարևորագույն տարր, կազմում են ենթանտառ այլ ցեղերի ներկայացուցիչների հետ, աճում են արիդային նոսրանտառներում, լեռնային գետերի առափնյա թավուտներում:

Սզնինները հանդիսանում են արժեքավոր բուսական ռեսուրս: Սզնու որոշ տեսակներ տալիս են համեղ և սննդարար պտուղներ, որոնք հարուստ են շաքարներով, օրգանական թթուներով, հանքային աղերով և վիտամիններով: Դեռ վաղ ժամանակներից մարդիկ այն օգտագործել են սննդի, ժողովրդական բժշկության մեջ: Սզնու արմատի և կեղևի թուրմով ներկել են թելեր: Ներկայումս էլ սզնիններն ունեն մեծ տնտեսական նշանակություն: Չորադիմացկուն և ցրտադիմացկուն տեսակներն օգտագործվում են որպես պատվաստակալ խնձորենու, տանձենու, սերկևիլենու բարձրարժեք տորտերի ստացման համար, գեղազարդ տեսակները պիտանի են քաղաքների և բնակավայրերի կանաչապատման, կենդանի ցանկապատերի ձևավորման համար: Կարծր և ամուր բնափայտից պատրաստում են կահույք, ատաղձագործական գործիքներ: Ծնորիկով իրենց դիմացկունության, սզնինների որոշ ներկայացուցիչներ հեռանկարային են Հայաստանի ստորին և միջին լեռնային գոտիներում արդյային դենդրոպարկերի ստեղծման համար [1]:

Տարածաշրջանի դենդրոֆլորան ուսումնասիրած մի շարք հեղինակների աշխատություններ պարունակում են հարուստ տեղեկություններ Հայաստանի սզնինների վերաբերյալ [3, 4, 11, 12]: Հաշվի առնելով սզնինների գործնական մեծ նշանակությունը տնտեսության և բժշկության մեջ առավել նպատակային օգտագործման համար, ուսումնասիրել ենք Հայաստանում աճող սզնինների տեսակային կազմը:

Նյութ և մեթոդ: Ուսումնասիրության համար նյութ են հանդիսացել ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի (ERE), ՌԴ ԳԱ Վ.Լ. Կոմարովի անվան բուսաբանության ինստիտուտի (LE), Ն.Ի. Վավիլովի անվան բուսաբանության ինստիտուտի (WIR), ՌԴ ԳԱ Տիգրիսի անվան Մոսկվայի Գլխավոր բուսաբանական այգու (WHA), Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի (MW), Վրաստանի ԳԱ բուսաբանության ինստիտուտի (TBI), և Վրաստանի պետական թանգարանի (TGM) բուսապահոցներում պահպանվող հերբարիումային նմուշները: Ուսումնասիրվել են տեսակների տիպերը, բոլոր նյութերը Կովկասից, Իրանից և Թուրքիայից, որոնք պահվում են վերը նշված բուսապահոցներում:

Դաշտային ուսումնասիրությունները և սեփական հավաքները կատարվել են 2005–2010 թթ. ժամանակահատվածում երթուղային և ստացիոնար մեթոդներով: Աշխատանքում օգտագործվել է համեմատական մորֆոլոգիական մեթոդը: Տեսակների տարածվածության սահմանները ճշտելու համար օգտվել ենք հարևան երկրների քաղաքներից [13,14]: Հայաստանի ֆլորիստիկ շրջանների բաժանումը կատարվել է ըստ Թախտաջյանի [10]:

Արդյունքներ և քննարկում: Հետազոտությունների արդյունքում ճշտվել է Հայաստանում աճող սզնինների տեսակային կազմը, սինոնիմիկան, նկարագրվել են գիտության համար երեք նոր տեսակ՝ *C. susanykleinae* Gabrielian et Sargsyan [2], *C. gabrielianae* Pojark. ex Sargsyan [7], *C. x razdanica* Pojark. ex Sargsyan [7], բացահայտվել են Հայաստանի ֆլորայի համար նոր տեսակներ՝ *C. microphylla* K. Koch [5], *C. pallasii* Griseb. [5], *C. eriantha* Pojark. [5], *C. stevenii* Pojark. [8], *C. pojarkoviae* Kossykh [8], հաստատվել է *C. szovitsii* Pojark. տեսակի առկայությունը Հայաստանի ֆլորայում [5], ընդունվել են *C. tournefortii* Griseb. [6], *C. rhipidophylla* Gand. [9] տեսակների անվանումների գերակայությունը: Ճշտվել են սզնու տեսակների տարածման սահմանները, ինչպես նաև հայտնաբերվել են մի շարք տեսակների համար տարածման նոր շրջաններ:

Հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ Հայաստանում սզնինները ներկայացված են 22 տեսակով, որոնք պատկանում են 3 սեկցիաների:

Genus *Crataegus* L., Սզնի, Ալոնդենի, 1753, Sp. Pl. 1: 475, p.p.

Սեկցիա 1. *Crataegus*

Տերևաթափ ծառեր կամ թփեր են: Ունեն կարճ, քիչ քանակությամբ երկար փշեր, երբեմն փշերը բացակայում են: Տերևները պարզ են, բլթակավոր, տերևաթիթեղը ամբողջաէջ է, ատամնաէջ, սղոցաէջ կամ անհամաչափ ատամնաէջ, թավոտ կամ մերկ: Տերևակոթունը 1,5—2 (4) անգամ կարճ է տերևաթիթեղից: Ծաղկաբույլը բազմաձաղիկ պարզ կամ բարդ վահանիկ է, հազվադեպ՝ հովանոց: Փռնանթերը սպիտակ են, վարդագույն, կարմիր, մանուշակագույն: Պտուղները գնդաձև են, օվալաձև, զլանաձև, գույնը տարբեր տեսակների մոտ տարբեր է՝ բաց կարմիրից մուգ կարմիր, կարմրագորշագույն, մինչև սև, 1—2 (3) կորիզներով: Կորիզները ներքին կողմից թույլ փոսիկավոր են կամ գրեթե հարթ, դրսի կողմից՝ 1–3 երկարավուն ակոսիկներով: Պտղամիսը դեղին է, հյութալի կամ այլուրալի:

Տիպը՝ *C. rhipidophylla* Gand.

1. *C. atrosanguinea* Pojark. 1939, Фл. СССР 9, Addenda 8: 504. – Ս. մուգ արնագույն:

Ծառ է 8-10 (12) մ բարձրության: Աճում է լեռնային գետերի զառիթափերին, բացատներում և մացառուտներում: Հանդիպում է ցածր և միջին լեռնային գոտիներում 800-1800 մ ծ.մ.բ.: Ծաղկում է մայիսին, պտղակալում՝ հոկտեմբերին:

Տիպը. “Армения, сел. Норк близ Еревана, 14.10.1937, n 380, А.Пояркова”. Holo.: LE!, iso.: LE!

Տարածված է Հարավային Անդրկովկասում, Անատոլիայում, Իրանում: Հայաստանում հանդիպում է Լոռու, Երևանի, Դարեղեգիսի և Զանգեզուրի ֆլորիստական շրջաններում:

2. *C. caucasica* K. Koch 1853, Verh. Ver. Beford. Gartenb. Konigl. Preuss. Staaten, N.R. 1: 286. (Ս. կովկասյան:

Բարձր թուփ է կամ փոքր ծառ 2-5 մ բարձրության: Աճում է միայնակ կամ խմբերով բացատներում, առափնյա թփուտներում, մացառուտներում: Հանդիպում է ցածր և միջին լեռնային գոտիներում 800-1800 մ ծ.մ.բ.: Ծաղկում է մայիսին, պտղակալում՝ սեպտեմբերին, հոկտեմբերին:

Տիպը. Caucasus, Wilhelms s. n. (holotype: B, destroyed). – Նեոտիպը առանձնացրել է Н. Riedl-ը [14]: “Азербайджан, окр. г. Кировабада. Каменистый склон с редкими кустарниками, близ устья реки Мал. Кюрай-чай (пониже с. Чайкенд) 27.09.1937, leg. et det. Пояркова, № 288”. Neotyp. LE!

Տարածված է Անդրկովկասում, Իրանում: Հայաստանում հանդիպում է Լոռու, Իջևանի, Ապարանի, Երևանի, Գեղամա, Դարեղեգիսի և Զանգեզուրի ֆլորիստական շրջաններում:

3. *C. meyeri* Pojark. 1939, Фл. СССР 9, Addenda 8: 500. – Ս. Մեյերի:

Բարձր թուփ է կամ ծառ 2-6 (8) մ բարձրության: Աճում է բացատներում, մացառուտներում, արիդային նոսրանտառներում, քարքարոտ լեռնալանջերին: Հանդիպում է ցածր, միջին և բարձր լեռնային գոտիներում 800-2000 մ ծ.մ.բ.: Ծաղկում է մայիսին, պտղակալում՝ հոկտեմբերին:

Տիպը. “Ереванский р-н. Заросли кустарников на каменистых склонах монастыря Гехарт. 11.10.1936, № 792. А. Пояркова”. Holo.: LE!, iso.: ERE!

Տարածված է Արևելյան Կովկասում, Անդրկովկասում, Անատոլիայում, Իրանում: Հայաստանում հանդիպում է Լոռու, Իջևանի, Արագածի, Սևանի, Երևանի, Գեղամա, Դարեղեգիսի, Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստական շրջաններում:

4. *C. eriantha* Pojark. 1939, Фл. СССР 9, Addenda 8: 500. – Ս. մազմզոտածաղիկ:

Թուփ է 3-5 մ բարձրության: Աճում է արիդային նոսրանտառներում, մացառուտներում:

Հանդիպում է ցածր և միջին լեռնային գոտիներում 800-1800 մ ծ.մ.բ.: Ծաղկում է մայիսին, պտղակալում՝ հոկտեմբերին:

Տիպը. “In declivibus prope fluvium Gandscha, disrictus Airum, 01.05.1844. n° 1399 Flora Transcauc. Legit. Dr. Kolenati”. Holo.: LE!, iso.: LE!

Տարածված է Արևելյան Կովկասում, Արևելյան և Հարավային Անդրկովկասում: Հայաստանում հանդիպում է Երևանի, Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստական շրջաններում:

5. *C. rhipidophylla* Gand. 1871, Bull. Soc. Bot. France 18: 447. – Ս. հովհարատերև:

Բարձր թուփ է կամ ծառ 3-8 մ բարձրության: Աճում է բացատներում, ենթանտառում, քարքարոտ լեռնալանջերին, գետերի առափնյա հովիտներում: Հանդիպում է ցածր, միջին և բարձր լեռնային գոտիներում 800-2000 մ ծ.մ.բ.: Ծաղկում է մայիս, հունիսին, պտղակալում՝ սեպտեմբերին:

Տիպը. “France, Rhone, Liergues, a la Combe, 2 Oct. 1870, Gandoger”. Holo.: LY.

Տարածված է Եվրոպայում, Ղրիմում, Կովկասում, Անատոլիայում: Հայաստանում հանդիպում է բոլոր ֆլորիստիկ շրջաններում, բացի Վերին Ախուրյանից:

6. *C. pseudoheterophylla* Pojark. 1939, Фл. СССР 9, Addenda 8: 506. – Ս. կեղծ տաքատերև:

Բարձր թուփ է կամ ծառ 3-5 մ բարձրության: Աճում է թփուտներում, մացառուտներում, ենթանտառում, քարքարոտ լեռնալանջերին: Հանդիպում է միջին և բարձր լեռնային գոտիներում 1200-2000 մ ծ.մ.բ.: Ծաղկում է մայիսին, պտղակալում՝ սեպտեմբերին:

Տիպը. “Ереванский р-н, окр. монастыря Гехарт. Каменистый склон с кустарниками. 11.10.1936, № 793. А. Пояркова”. Holo.: LE!, iso.: LE!

Տարածված է Ղրիմում, Արևմտյան Կովկասում, Դաղստանում, Անդրկովկասում, Անատոլիայում, Հյուսիսային Իրանում, Աֆղանստանում: Հայաստանում հանդիպում է Լոռու, Իջևանի, Երևանի, Գեղամա, Դարեղեգիսի, Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստական շրջաններում:

7. *C. microphylla* K. Koch 1853, Verh. Ver. Beford. Gartenb. Konigl. Preuss. n. s. 1: 288. – Ս. մանրատերև:

Թուփ է 1–2.5 մ բարձրության: Աճում է բացատներում, թփուտներում: Հանդիպում է ցածր և միջին լեռնային գոտիներում 800–1200 մ ծ.մ.բ.: Ծաղկում է մայիսին, պտղակալում՝ սեպտեմբերին:

Տիպը. “Talish, ad marginem sylverum prope Lenkoran, 1838, Hohenacker s. n.”. Holo.: W, iso.: BM.

Տարածված է Արևելյան Եվրոպայում, Ղրիմում, Արևմտյան Կովկասում, Դաղստանում, Անդրկովկասում, Անատոլիայում, Իրանում, Իրաքում: Հայաստանում հանդիպում է Իջևանի և Զանգեզուրի ֆլորիստական շրջաններում:

8. *C. pallasii* Griseb. 1843, Spicil. Fl. Rumel. et Bithyn. 1: 89. – Ս. Պալլասի:

Թուփ է 1.5–3 մ բարձրության: Աճում է բացատներում, մացառուտներում, քարքարոտ լեռնալանջերին: Հանդիպում է միջին լեռնային գոտում 1200–1800 մ ծ.մ.բ.: Ծաղկում է մայիսին, պտղակալում՝ հոկտեմբերին:

Տիպը. “Sarepta Pallas s. n.”. Holo.: LE!

Տարածված է Արևելյան Եվրոպայում, Ղրիմում, Դաղստանում, Արևելյան և Հարավային Անդրկովկասում, Անատոլիայում: Հայաստանում հանդիպում է Երևանի, Գեղամա, Դարեղեգիսի և Զանգեզուրի ֆլորիստական շրջաններում:

9. *C. stevenii* Pojark. 1939, Фл. СССР 9, Addenda 8: 505. – Ս. Ստեվենի:

Թուփ է 1.5–2 մ բարձրության: Աճում է բացատներում, քարքարոտ լեռնալանջերին: Հանդիպում է ցածր լեռնային գոտում 800–1200 մ ծ.մ.բ.: Ծաղկում է մայիսին, պտղակալում՝ սեպտեմբերին:

Տիպը. “Tauria, Alushta, N. Puring”. Holo.: LE.

Տարածված է Ղրիմում, Հարավային Անդրկովկաս, Անատոլիայում: Հայաստանում հանդիպում է Իջևանի և Զանգեզուրի ֆլորիստական շրջաններում:

10. *C. x zangezura* Pojark. 1939, Фл. СССР 9 Addenda 8: 508 (*Crataegus pentagyna* x *Crataegus pseudoheterophylla*). – Ս. զանգեզուրի:

Թուփ է 1.5–2.5 մ բարձրության: Աճում է բացատներում, նոսրանտառներում, մացառուտներում: Հանդիպում է ցածր, միջին և բարձր լեռնային գոտիներում 800–2000 մ ծ.մ.բ.: Ծաղկում է մայիսին, պտղակալում՝ հոկտեմբերին:

Տիպը. “Зангезур, окр. г. Горис. В кустарниковых зарослях в нижней части склона ущелья реки Горис-чай. 21.09.1936г., № 540. А. Пояркова”. Holo.: LE!, iso.: LE!

Տարածված է Նախիջևանում: Հայաստանում հանդիպում է Զանգեզուրի ֆլորիստական շրջանում:

11. *C. x armena* Pojark. 1939, Фл. СССР, 9, Addenda 8: 509 (*Crataegus meyeri* x *Crataegus rhipidophylla*). – Ս. հայկական:

Թուփ է 2–2.5 մ բարձրության: Աճում է արիդային նոսրանտառներում, մացառուտներում, լեռնալանջերին: Հանդիպում է ցածր, միջին և բարձր լեռնային գոտիներում 800–2000 մ ծ.մ.բ.: Ծաղկում է հունիսին, պտղակալում՝ հոկտեմբերին:

Տիպը. “Армения, Мегринский район, с. Личк, на каменистом склоне с кустарниками, по краю Мегринской дороги. 1.10.1936, n 754. А. И. Пояркова”. Holo.: LE!, iso.: LE!

Տարածված է Հարավային Անդրկովկասում և Հյուսիսային Իրանում: Հայաստանում հանդիպում է Երևանի, Գեղամա, Դարեղեգիսի, Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստական շրջաններում:

12. *C. x ulotricha* Pojark. ex Gladkova 1996, Новост. сист. высш. раст. 30: 96 (*Crataegus meyeri* x *Crataegus pentagyna*) – Ս. զանգրամազիկավոր:

Բարձր թուփ է կամ փոքր ծառ 2–5 մ բարձրության: Աճում է ենթանտառում, նոսրանտառներում: Հանդիպում է միջին լեռնային գոտում 1200–1800 մ ծ.մ.բ.:

Ծաղկում է մայիսին, պտղակալում՝ հոկտեմբերին:

Տիպը. “Зангезур, подъем от г. Гориса к сел. Шинуайр. Редколесье на южн. склоне к р. Шакараджур. 1400 – 1500 м над ур.м. 30.09.1961. А. Пояркова”. Holo.: LE!, iso.: LE!

Հայաստանում հանդիպում է Ջանգեզուրի ֆլորիստական շրջանում: Հայաստանի էնդեմ է:

13. *C. x razdanica* Pojark. ex Sargsyan 2009, Փլ., растит., раст. рес. Армении 17: 12 (*Crataegus atrosanguinea* x *Crataegus pseudoheterophylla*). – Ս. հրազդանյան:

Բարձր թուփ է կամ փոքր ծառ 3–5 մ բարձրության: Աճում է գետերի ափամերձ թավուտներում: Հանդիպում է միջին լեռնային գոտում 1200–1800 մ ծ.մ.բ.: Ծաղկում է մայիսին, պտղակալում՝ սեպտեմբերին:

Տիպը. “Армянская ССР, с. Арабкир, сев. склон к р. Раздан, древесно-кустарниковые заросли, 10.09.1961, А. Пояркова. № 10”. Holo.: LE!, iso.: LE!

Հայաստանում հանդիպում է Երևանի ֆլորիստական շրջանում: Հայաստանի էնդեմ է:

Սեկցիա 2. *Pentagyna* C. K. Schneid. 1906, Ill. Handb. Laubh. 1: 768.

Ծառեր են մինչև 10 մ բարձրության: Փշերը քիչ են, կամ բացակայում են: Տերևները ձվաձև են, լայն ձվաձև, թույլ ասամնաեզր, թավոտ կամ մերկ: Ծաղկաբույլը բարդ վահանիկ է: Պտուղները սև են, պտղամիսը կարմիր է: Փռնանոթները կարմիր են: Կորիզները թվով 3–5, եռանիստ, ներքին կողմից հարթ, դրսից՝ թույլ արտահայտված երկարավուն ակոսիկներով: Բաժակաթերթերը պտղակալման ժամանակ ցցված են կամ թույլ ներքև թեքված:

Տիպը՝ *C. pentagyna* Waldst. et Kit. ex Willd.

14. *C. atrofusca* (K. Koch) Kassumova 1991, Бот. журн. 76, 7: 986. – Ս. մուգ գորշագույն:

Ծառ է 3–10 մ բարձրության: Աճում է կաղնու և հաճարի անտառների ենթանտառում, բացատներում: Հանդիպում է ցածր և միջին լեռնային գոտիներում 800–1800 մ ծ.մ.բ.: Ծաղկում է մայիսին, պտղակալում՝ սեպտեմբերին:

Տիպը. “Steven s. n.”. Holo.: LE!

Տարածված է Ղրիմում, Արևելյան Կովկասում, Արևելյան և Հարավային Անդրկովկասում: Հայաստանում հանդիպում է Լոռու, Իջևանի, Սևանի, Դարեղեզիսի, Ջանգեզուրի ֆլորիստական շրջաններում:

15. *C. pentagyna* Waldst. et Kit. ex Willd. 1800, Sp. Pl. 2, 2: 1006. – Ս. հինգսունականի:

Ծառ է 3–8 (12) մ բարձրության: Աճում է բացատներում, ենթանտառում: Հանդիպում է ցածր և միջին լեռնային գոտիներում 800–1800 մ ծ.մ.բ.: Ծաղկում է հունիսին, պտղակալում՝ հոկտեմբերին:

Տիպը. “Hungary/Yugoslavia. In Dunato et Syrmio (Danube and Serbia), Kitaibel s. n.”. Holo.: B-W

Տարածված է Արևմտյան Եվրոպայում, Ղրիմում, Կովկասում (բացի Նախիջևանից): Անատոլիայում, Իրանում: Հայաստանում հանդիպում է Լոռու, Իջևանի, Ջանգեզուրի, Մեղրու ֆլորիստական շրջաններում:

16. *C. susanykleinae* Gabrielian et Sargsyan 2009, Փլ., растит., раст. рес. Армении 17: 10. – Ս. Սյուզանկլեյնի:

Ծառ է կամ բարձր թուփ 3–10 մ բարձրության: Աճում է բացատներում, նոսրանտառներում: Հանդիպում է միջին և բարձր լեռնային գոտիներում 1200–2000 մ ծ.մ.բ.: Ծաղկում է մայիսին, պտղակալում՝ սեպտեմբերին:

Տիպը. “Armenia, Chosrov reservatum, prope ruinas Surb Stephanos ecclesiam, in silvis raris xerophyticis. Leg. et det. E. Gabrielian, 17.10.1978, ERE № 170576”. Holo.: ERE!, iso.: ERE!, LE!

Հայաստանում հանդիպում է Երևանի և Գեղամա ֆլորիստական շրջաններում: Հայաստանի էնդեմ է:

Սեկցիա 3. *Azaroli* Loud. 1838, Arbor. frutic. Brit. 2: 826.

Թփեր են՝ լավ զարգացած, բազմաքանակ կարճ և երկար փշերով, տերևները ձվաձև են, բազմակի խորը կտրտված բլթակներով, տերևները թավոտ են:

Ծաղկաբույլը բարդ վահանիկ է, հաճախ թավոտ առանցքներով: Փռնանոթները սպիտակ են: Պտուղները կլոր են, հաճախ բևեռներից սեղմված, դեղին, նարնջագույն, կարմիր: Կորիզները թվով 2 – 5, ներքին կողմից հարթ, դրսից՝ թույլ արտահայտված ակոսիկներով:

Տիպը՝ *C. azarolus* L.

Հայաստանում հանդիպում է Երևանի և Դարեղեզիսի ֆլորիստական շրջաններում: Հայաստանի էնդեմ է:

Բարձր համային արժեքով առանձնանում են *C. pontica*, *C. orientalis*, *C. Susanykleinae* և *C. atrsanguinea* տեսակների պտուղները: *C. meyeri*, *C. rhipidophylla*, *C. Pseudo-heterophylla*, *C. x armena* և *C. orientalis* տեսակները բարձր գեղագարդության շնորհիվ խորհուրդ է տրվում օգտագործել միջին և բարձր լեռնային գոտիների բնակավայրերի կանաչապատման մեջ: *C. tournefortii*, *C. x armena*, *C. orientalis*, *C. meyeri*, *C. pontica*, *C. pojarkoviae* և *C. szovitsii* տեսակները հեռանկարային են արհիլային դենդրոպարկերի ստեղծման համար: *C. orientalis*, *C. meyeri*, *C. pallasii* և *C. microphylla* տեսակները հիանալի նյութ են կենդանի ցանկապատների ձևավորման համար: *C. x zangezura*, *x C. ulo-trich*, *C. microphylla*, *C. pontica*, *C. tournefortii*, *C. szovitsii*, *C. stevenii* և *C. pojarkoviae* տեսակներն ունեն պահպանման կարիք:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Варданян Ж.А.* Деревья и кустарники Армении в природе и культуре. Ереван, 367с, 2003.
2. *Габриэлян Э.Ц., Саркисян М.В.* Новый эндемичный вид *Crataegus susanykleinae* (Rosaceae) из Армении. Фл., растит., раст. рес. Армении., вып. 17. Ереван, 10–11, 2009.
3. *Пояркова А.И.* Род *Crataegus* L. Флора СССР, 9, М.- Л, 416–468, 498–510, 1939.
4. *Прилипко Л.И.* Род *Cratagus* L. Дендрофлора Кавказа, 4. Тбилиси, 136–157, 1965.
5. *Саркисян М.В.* Новые виды и новые местонахождения видов рода *Crataegus* (Rosaceae) для флоры Армении. Мат-лы межд. конфер. “Актуальные проблемы ботаники в Армении”, Ереван, 153–157, 2008.
6. *Саркисян М.В.* Конспект рода *Crataegus* (Rosaceae) во флоре Армении. Мат-лы межд. конфер. “Актуальные проблемы ботаники в Армении”. Ереван, 158–163, 2008.
7. *Саркисян М.В.* Два новых для науки вида рода *Crataegus* (Rosaceae) из Армении. Фл., растит., раст. рес. Армении, вып. 17, Ереван, 11–14, 2009.
8. *Саркисян М.В.* Новые для флоры Армении виды рода *Crataegus* (Rosaceae). Фл., растит., раст. рес. Армении. вып. 17, Ереван, 31, 2009.
9. *Саркисян М.В.* Представители рода *Crataegus* (Rosaceae) Южного Закавказья. Тезисы докладов межд. научн. конфер. “Изучение флоры Кавказа”. Пятигорск, 93–94, 2010.
10. *Тахтаджян А. Л.* Флористические области Земли. Л., Наука, 248с, 1978.
11. *Тахтаджян А.Л., Федоров Ан.А.* Флора Еревана. Определитель дикорастущих растений Араратской котловины. Л., 146–147, 1972.
12. *Федоров Ан.А.* Род *Crataegus* L. Флора Армении, 3, Ленинград, 291–303, 1958.
13. *Browicz K.* *Crataegus* (Rosaceae). Flora of Turkey and the East Aegeon Islands. In Davis P. H. Edinburg, University Press, 4, 133–147, 1972.
